# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1938 Ապրիլ – Մայիս Թիւ 4-5

էջ

Խմբ. — Հայ ազգի մեծ սուգը – Ն. Վ. Խորէն Ա. Կաթողիկոս մահացած . . 181
Խմբ. — Հայ Գողգոթան և մեր ազատութեան արշալոյսը . . . . . 184

Հայկական Ճեմարան–Բանասիրական

Հ. Յ. Թ. — Կանոնք Ս. Սահակայ . 86
Գ. Հենասէր. — Մխիթարեան աշակերտներ իբր ուսուցիչ և իբր գրագէտ – Յովհ. Եզեկեան . . . . . . 97
Յ. Քիւրտեան. — Թովմաս Հէրպէրթ և իր Ուղեգրութիւնը (1627–1629). ծանօթութիւն պարսկահայոց մասին . . . 103
Գ. Արքեպս. Արսլանեան. — Պատառիկներ լուսածիր չքացեալ վանքերէն (շար.) . . . . . . . 108
Մկրտիչ քհնյ. Մուրատեան. — «Գայլ վահան» բերդը . . . . . 111
Մեսրովբ Յ. Սեթեան. — Շիրիմք անմահ բարերարացն տպագրութեան Չամչեանի Եռահատոր Պատմութեան Հայոց . . 112

Գրական

Արամայիս Սրապեան. — Պայրընեան ձիթենիներուն տակ (քերթուած) . . 133
Հրաչ Քաջարենց. — Ինքնաշարժ իմ, սուրա՛, սուրա՛ . . . . . 139
Հ. Վահան Յովհաննէսեան. — Ծաղիկներու տօնը . . . . . . 140
Վահան Շահպազ. — Կոմիտաս . . 140
Հ. Միքայէլ Յովհաննէսեան. — «Ես կ'երթամ» (Հ. Պ. Ք.ի յիշատակին) . 140
Էլիոյ Վիթթորինի. — Սարոյեան Հայորդին (թրգմ. Հրաչ Քաջարենց). . . 141
Յովսէփ Աշրաֆեան. — Մայքըլ Արլէն. 143

Օրուան գրքեր – Գրախօսական

Յ. Քիւրտեան. — «Հայերը Հնդկաստանի մէջ» (Armenians in India) (Մեսրովբ Սէթ). 152
Հրաչ Քաջարենց. — «Արեւակալ» (քերթուածներ Բ. Թօփալեանի) . . . 154
Հրաչ Քաջարենց. — «Ծաղրանկարներ» (Ն. Պէշիկթաշլեանի) . . . . 156

Շար.ը տես գ. էջ

# SOMMAIRE

1938 Avril - Mai N. 4-5

p.

*Réd.* — La mort de S. B. Khorène I[er] Catholicos des Arméniens . . . 181
*Réd.* — Le Martyre d'Arménie et l'aurore de sa Liberté . . . . 184

Académie Arménienne-Philologie

*P. J. Th.* — Les Règles de St. Isaac Patriarche . . . . . . 86
*K. Henassère.* — Les Anciens élèves des PP. Mekhitharistes comme professeurs et comme écrivains - J. Ezékian . 97
*H. Kurdian.* — Thomas Herbert et son «Voyage» - notices sur les Arméniens en Perse . . . . . 103
*Mgr. K. Arslanian.* — Mémoires des anciens Couvents Arméniens . . . 108
*Prêtre M. Mouradian.* — La forteresse «Kaïl-Vahan» . . . . 111
*Mesrovb J. Seth.* — Les tombeaux des bienfaiteurs immortels de l'éd. de «l'Histoire d'Arménie» du P. M. Tchamtchian. 112

Littérature

*Aramaïs Serabionian.* — Sous les Oliviers de Byron . . . . . 133
*H. Katcharentz.* — Cours, mon auto! 139
*P. Vahan Hovhannessian.* — La fête des fleurs . . . . . . 140
*Vahan Chahbaz.* — A Komitas . 140
*P. M. Hovhannessian.* — «J'en vais» (à la mémoire du P. P. K.) . . . 140
*Elio Vittorini.* — Saroyan l'Arménien (trad. par H. Katcharentz) . . 141
*Joseph Achrafian.* — Michael Arlen. 143

Les livres du jour - Recensions

*H. Kurdian.* — «Armenians in India» (par M. J. Seth) . . . . . 152
*H. Katcharentz.* — «Arévakal» (par P. Topalian) . . . . . . 154
*H. Katcharentz.* — «Caricatures» (par N. Béchiktachlian . . . . 156

Voir la suite, page 3.

1843-1938

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՊՐԻԼ – ՄԱՅԻՍ ԹԻՒ 4-5

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՏ. ՂԶ ՌՑՁԷ-ՌՑՁԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՀԱՅ ԱԶԳԻ ՄԵԾ ՍՈՒԳԸ

## Ն. Վ. ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՀԱՑԱԾ

Աւա՛ղ, ծիծեռնակներ չեկան այս գարուն մեր հայրենի երկրէն և ոչ աղաւնիներ Արարատի կատարէն՝ ձիթենիի շիւղով։

Դարձեալ զուլում մեր աշխարհին մէջ։ Դարձեալ կարմիր Ապրիլ մեր տարեցոյցին մէջ մեր ցեղի նահատակներով։

Ու կ'երթան ինչպէս ռազմի դաշտին վրայ՝ կարգաւ, մեր երկրի զինուորները, գործիչն ու գրագէտը։ Իշխանէն ու վարիչէն յետոյ նաեւ Հայրապետը։

Եւ ո՞վ է որ չի խռովեր ահաւոր այս ժամուն... մռայլ ու սարսուռ։

Ու լռութեան ու խաւարին մէջ կարծես ի սպառ շիջած է Լուսաւորչի կանթեղն անմար...

Եւ սուգն այնքան մեծ է այնտեղ որքան ահեղ ու անողոք մահը՝ որ կը քարացնէ ամէն սիրտ և ամէն արցունք։

Վեհ. Խորէն Ա. Կաթողիկոս մահացած է տարւոյս Ապրիլ 10ին։ Գոյժը Երուսաղէմ կը հասնի, ու անկէ անսահման վիշտով կը տարածուի ամբողջ Հայ աշխարհին։

Իրաւունք ունի Հայ ժողովուրդը ծայրայեղ սուգով ողբալու իր մահացած Հովուապետը, քանի որ Ան, նախախնամական պարագաներու մէջ ընտրուած, կեդրոնն էր իր միութեան և յոյսերուն, և պահապանը Լուսաւորչի կանթեղին, Էջմիածնի հինաւուրց սրբարանին մօտ հսկող. քանի որ Ան օժտուած իմաստուն և խոհեմ զգուշաւորութեամբ՝ Հայ Երկրի իշխանութեան քով Քրիստոսի անուան ու խաչին դրօշը կը ծածանէր, իր ձայնը կը հասցնէր մխիթարութեան և օրհնութեան պատգամներով մինչեւ աշխարհի հեռաւոր անկիւնները։



digitised by A.R.A.R.@



ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1606-71

ՀՍՍՌ-Арм ССР



Որքան աճաւոր է ժամը, նոյնքան պէտք է խորանայ սուգին և կսկիծին հետ Հայուն անվկանդ հաւատքը դէպ ի իր Հայրերու Աստուածը՝ որ գիտէ փորձել մահու չափ, այլ և յարուցանել աստուածօրէն:

Ցոյսի և յարութեան հաւատքն և օծութիւնը ճառագայթարձակ Գողգոթայի ետևէն՝ թող սփոփանքն ըլլայ սգաւոր Հայ ժողովուրդին, ու զանիկա վառէ ու զինէ կենդանութեան անմեռ ոգւով և աւիւնով, միշտ նահատակ և միշտ կենդանի ու յաղթական՝ յանուն իր գոյութեան մղած քառասուն դարերու մարտերէն յետոյ:

Համօրէն Հայ ազգին հետ և անոր բոլոր սիրելի զաւակներուն ագակից Մխիթարեան Միաբանութիւնս ալ իր յարգանքի ամենախորին և ցաւագին զգացումն է որ կը խնկէ հանգուցեալ Վեհ. Խորէն Ա. Կաթողիկոսի շիրմին և յիշատակին, անմոռաց պահելով այն յատուկ սէրն և գուրգուրանքը զոր Նա ունէր և կը պահէր Մխիթարայ Ցան հետ սիրալիր նամակներով ամէն տարի, և կաթողին ողջագուրանքին համար զոր ղրկած էր Նա մեր բոլոր Հայրերուն և մանաւանդ սրտառուչ կտակին՝ Ազգին յոյսն և յարութիւնը գնելով Մխիթարեան աստուածապահ Ուխտին վրայ:

* * *

Ողբացեալ Խորէն Ա. Կաթողիկոս ծնած է Թիֆլիս 6 Դեկտեմբեր 1873ին:
Նախնական ուսումներէն յետոյ կ'անցնի ծննդավայրին Ներսէսեան վարժարանը և ապա կը
ղրկուի Ջուեյերխ երբեւ ազատ ունկնդիր հետեւելու համալսարանական ուսումներու:
Վերադարձին կը նուիրուի ուսուցչութեան Թիֆլիզի շրջանին, ապա երբեւ միաբան Սեւանի
վանքին, ուր Վարդապետ կը ձեռնադրուի 1901ին Վանահայր Սարգիս Եպս. Փիլոյեանէ:
Նախ կը կոչուի Առաջնորդական փոխանորդի պաշտօնին Նոր Պայազիտի մէջ:
1903ին երբ Հայրենի հետ կ'ընդդիմանայ ցարական հայադաւ կարգադրութեանց՝ կ'աքսոր-
ուի. ապա կ'ազատի շնորհիւ Կովկասի փոխարքայ Վորոնցով Դաշքովի և կը վերադառնայ
Պայազիտ իր պաշտօնին գլուխը:
1910ին Երեւանի թեմի ժողովուրդը զինքը իրեն փոխ-թեմակալ կ'ընտրէ. և նոյն տարին
Եպիսկոպոս կը ձեռնադրուի Իզմիրլեան Կաթողիկոսէն:
1915ին Վանի աղետալի նահանջին՝ Խորէն Եպս. Նախագահ կ'ընտրուի Էջմիածնի Եղ-
բայրական Օգնութեան Յանձնաժողովին Երեւանի մէջ, ուր արթուն և անձնուէր գործունէու-
թեամբ կը յանձանձէ Թրքահայ փախստականները:
1917ին Գէորգ Ե.ի կոնդակով կը բանայ և կը նախագահէ Արեւմտահայ Համագումարին:
1918ին՝ Հայ ժողովուրդի տագնապալից օրերուն նախաձեռնական կ'ըլլայ իր գործը վերահաս
սովի և քաղաքական ամենադժուարին կացութեան շրջանին:
1920ին, Քաջազնունիի ընկերակցութեամբ Ամերիկա կ'երթայ երբեւ Կաթողիկոսական Նուի-
րակ՝ այն թեմին գործերու կարգադրութեան համար, ինչ որ յաջողութեամբ կը պսակուի:
1923ին՝ Գէորգ Ե.ի տկարութեան շրջանին կ'անցնի Էջմիածին երբեւ Կաթողիկոսական տե-
ղակալ՝ նախագահելով Գեր. Հոգ. Խորհուրդին:
1929ին, Գէորգ Ե.ի մահէն վերջ կը նշանակուի Տեղակալ Կաթողիկոսական Աթոռին և
Նախագահ Գեր. Հոգ. Խորհուրդին:
1932ի Նոյեմբեր 12ին, Ս. Էջմիածնի մէջ գումարուած Ազգ.-Եկեղեցական Ընդհ. Ժո-
ղովին կողմէն կ'ընտրուի Կաթողիկոս ամենայն Հայոց և յաջորդ օրը՝ 13 Նոյեմբերին կը ստանայ
կաթողիկոսական օծումը:
1938ի Ապրիլ 10ին տեղի կ'ունենայ իր մահը՝ ըստ հեռագրին երբեւ սրտի կաթուածէ, դըժ-
բախտաբար խորհրդաւոր թողլով ամէն մանրամասնութիւն թէ մահուան և թէ մանաւանդ թաղ-
ման պարագաներուն, ինչպէս կը հեղաէր Թորգոմ Ս. Պատրիարք (Սիոն, Մայիս): Խմբ.

digitised by A.R.A.R.@